

<https://doi.org/10.46991/hc.2024.21.1.162>

Demographic Processes in the Armenian and Azerbaijani Communities of the North Caucasus in 1991-2022 (Using the Example of Stavropol Territory)

Irina Badalyan

<https://orcid.org/0009-0005-7718-2361>

YSU Faculty of History, PhD student at the Chair of History of Armenia's Neighboring Countries

irina.badalyan19@gmail.com

Keywords: North Caucasus, Stavropol region, demography, Armenians, Azerbaijanis, diaspora, migration.

The study of the Armenian and Azerbaijani communities formed in different parts of the North Caucasus has been highly important in recent decades. During the study, we observed the demographic picture of the Armenian and Azerbaijani communities of the Stavropol region, studied and analyzed the existing problems, as well as researched the demographic processes and trends. Comparisons and analyses of the movements, processes, and realities of the two communities will be highlighted. The main task of the topic is to study the reasons for the formation of communities, the distribution of Armenian and Azerbaijani communities in the Stavropol region, the dynamics of the growth or decline of communities, factors affecting emigration from Armenia and Azerbaijan, inter-ethnic ties, business relations, educational and cultural exchanges.

The study showed that the demographic processes of Armenians and Azerbaijanis in the Stavropol region of the North Caucasus were shaped by historical events, including conflicts, migrations and political changes. The Nagorno Karabakh conflict between Armenia and Azerbaijan has led to displacement in both communities. Armenians in Azerbaijan and Azerbaijanis in Armenia have been forced to flee their homes due to violence and ethnic tensions, with some seeking refuge in the North Caucasus and other regions.

Ժողովրդագրական գործընթացները Հյուսիսային Կովկասի հայկական և ադրբեջանական համայնքներում 1991- 2022 թթ. (Ստավրոպոլի երկրամասի օրինակով)

Իրինա Բադալյան

ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի
ասպիրանտ

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 162-171



Received: 09.06.2024

Revised: 10.07.2024

Accepted: 31.08.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Հիմնաբառեր՝ Հյուսիսային Կովկաս, Ստավրոպոլի
երկրամաս, ժողովրդագրություն, հայեր,
ադրբեջանցիներ, սփյուռք, գաղթ:

Հյուսիսային Կովկասի տարբեր երկրամասերում ձևավորված հայկական և ադրբեջանական համայնքների ուսումնասիրությունը վերջին տասնամյակներում խիստ կարևորվել է: Ուսումնասիրության ընթացքում դիտարկել ենք Ստավրոպոլի երկրամասի հայկական և ադրբեջանական համայնքների ժողովրդագրական պատկերը, կատարել առկա հիմնախնդիրների ուսումնասիրում և վերլուծություն, ինչպես նաև հետազոտել ժողովրդագրական գործընթացները և միտումները: Կարևորվել է երկու համայնքների շարժերի, գործընթացների, իրողությունների համեմատությունները և վերլուծությունները: Թեմայի հիմնական խնդիրն է ուսումնասիրել համայնքների ձևավորման պատճառները, հայկական և ադրբեջանական համայնքների բաշխվածությունը Ստավրոպոլի երկրամասում, համայնքների աճի կամ նվազման դինամիկան, Հայաստանից և Ադրբեջանից արտագաղթելու վրա ազդող գործոնները, ազգամիջյան կապերը, գործնական հարաբերությունները, կրթական և մշակութային փոխառնչությունները և այլն:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Հյուսիսային Կովկասի Ստավրոպոլի երկրամասի հայերի և ադրբեջանցիների ժողովրդագրական գործընթացները ձևավորվել են պայմանավորված պատմական իրադարձություններով, ներառյալ հակամարտությունները, միգրացիաները և քաղաքական փոփոխությունները: Հայաստանի և Ադրբեջանի միջև Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը հանգեցրել է տեղահանությունների երկու համայնքներում: Հայաստանի ադրբեջանցիները ստիպված են եղել լքել իրենց տները բռնության և էթնիկական լարվածության պատճառով, մի որոշակի մասը ապաստան գտնելով Հյուսիսային Կովկասում և այլ շրջաններում:

Демографические процессы в армянской и азербайджанской общинах Северного Кавказа в 1991-2022 гг. (на примере Ставропольского края)

Ирина Бадалян

Аспирант кафедры истории сопредельных с Арменией стран исторического факультета ЕГУ

Ключевые слова: Северный Кавказ, Ставропольский край, демография, армяне, азербайджанцы, диаспора, миграция.

Большое значение в последние десятилетия приобрело изучение армянской и азербайджанской общин, сформировавшихся в различных частях Северного Кавказа. В ходе исследования мы наблюдали демографическую картину армянской и азербайджанской общин Ставропольского края, изучали и анализировали существующие проблемы, а также исследовали демографические процессы и тенденции. Будут освещены сравнения и анализы движений, процессов и реалий двух сообществ. Основной задачей темы является изучение причин формирования общин, размещения армянских и азербайджанских общин на Ставрополье, динамики роста или упадка общин, факторов,

Ժողովրդագրական գործընթացները Հյուսիսային Կովկասի հայկական և ադրբեջանական համայնքներում 1991- 2022 թթ. (Ստավրոպոլի երկրամասի օրինակով)

влияющих на эмиграцию из Армении и Азербайджана, межэтнических проблем, а также связи, деловые отношения, образовательное и культурное взаимодействие.

Исследование показало, что демографические процессы армян и азербайджанцев Ставропольского края Северного Кавказа формировались историческими событиями, включая конфликты, миграции и политические изменения. Конфликт в Нагорном Карабахе между Арменией и Азербайджаном привел к перемещению населения в обеих общинах. Армяне в Азербайджане и азербайджанцы в Армении были вынуждены покинуть свои дома из-за насилия и этнической напряженности, причем некоторые из них искали убежища на Северном Кавказе и в других регионах.

* * *

Ներածություն: Ստավրոպոլի երկրամասի բնակչության ազգային կազմը նկատելի փոփոխություններ է կրել: Այս գործընթացը սկսվեց 1980-ականների վերջին և առավել ցայտուն դարձավ 1990-ականներին: Այս միտումը շարունակվում է նաև հիմա: Դրա վրա ազդող գործոններից հարկ է նշել տարածաշրջանի աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկությունը. այն ուղղակիորեն սահմանակից է հյուսիսկովկասյան հինգ հանրապետությունների՝ Չեչնիայի, Դաղստանի, Հյուսիսային Օսեթիա-Ալանիայի, Կարաչայ-Չերքեզիայի, Կարաբաղի-Բալկարիայի հետ:

Ստավրոպոլի երկրամասը շփման գոտի է ուղղափառության և իսլամի, հնդեվրոպական, հյուսիսկովկասյան և ալթայական լեզվաընտանիքների էթնիկ խմբերի միջև: Ստավրոպոլի երկրամասի մոտ լինելը Դաղստանին, Չեչնիային, Հյուսիսային Օսիային, Կարաբաղի-Բալկարիային և Կարաչայ-Չերքեզիային ցույց է տալիս նրա բնակչության բազմազգությունը: Ծայրահեղ միգրացիոն ակտիվության պահերին երկրամասի տարածքը վերածվել է միգրացիայի յուրատեսակ միջանցքի, բուֆերային գոտու և տարանցիկ տարածքի:

Օտարերկրյա միգրանտները, հիմնականում Հարավային Կովկասի երկրներից, մեծ դեր են ունեցել երկրամասի բնակչության ժամանակակից էթնիկական կազմի մեջ: Ներկա փուլում Ստավրոպոլի երկրամասն ունի բազմազգ կենտրոններ, էթնիկ ծայրամասեր [Chikhichin, 2016]: Ըստ պատմական նյութերի՝ հայերի Ստավրոպոլի երկրամասում հաստատվելու երեք հիմնական փուլեր են տարբերակվում: Առաջին փուլում՝ 18-րդ դարի սկզբին, այնտեղ է տեղափոխվել մոտ 50 ընտանիք՝ Նոր Նախիջևանից (ներկայիս Ռոստովի շրջանից): Ստավրոպոլում ստեղծվեցին հայկական մեծ գաղթօջախներ: 1797 թվականին Պողոս I-ի հրամանագրով հիմնադրվել է Եդեսիա (այժմ՝ Ստավրոպոլի երկրամասի Կուրսկի շրջան) միաէթնիկ հայկական գյուղը [Иванова, 2016, 9-10]: Հայերի՝ այնտեղ հաստատվելու 2-րդ ալիքը 1915թ-ին էր, երբ սկսվեց Հայոց ցեղասպանությունը [Բացվել է «Հայերը Ստավրոպոլում» ցուցահանդեսը]: Իսկ երրորդ ալիքը կապված է 1980-1990 թթ. Ղարաբաղյան պատերազմի տարիների և Սպիտակի երկրաշարժի, Բաքու և Սումգայիթ քաղաքներում տեղի ունեցած ողբերգությունների հետ: Կարճ ժամանակահատվածում Ստավրոպոլի մարզում հայկական սփյուռքի թիվը կրկնապատկվել է: Ժամանակակից հայերի մեծ մասը բնակություն է հաստատել քաղաքներում և շրջաններում՝

Ստավրոպոլում, Միխայլովսկում և Շպակովսկի շրջանում, Պյատիգորսկում, գյուղ Գորյաչևոդսկում, Կիսլովոդսկում, Գեորգիևսկում և Կուրսկի շրջանում:

1980-ական թթ. երկրորդ կեսին և 1990-ական թթ. սկզբին Ստավրոպոլի մարզի զգալի թվով թաղամասերում և կենտրոններում հայտնվեցին միգրանտների խմբեր, որտեղ մինչ այդ հայերը չէին ապրել: Միգրանտների զգալի թիվը կազմում էին հայեր, ովքեր ստիպված էին լքել իրենց բնակության վայրերը՝ հիմնականում Լեռնային Ղարաբաղը, Հայաստանի Հանրապետությունը, Ադրբեջանի Հանրապետությունը, Վրաստանի Հանրապետությունը և Չեչնիան: Սա լուրջ հետևանքներ ունեցավ շրջանի հայ համայնքի ժողովրդագրական զարգացումների վրա: 1990-ական թթ. տարածաշրջանային սփյուռքը կրկնապատկվում է և Ստավրոպոլի հայ համայնքը իր չափերով երկրորդ տեղում էր Կուրսնի հայերից հետո [Сушиц, 2015, 155-157]: Ստավրոպոլի երկրամասում 1989 թ. մարդահամարի տվյալներով ապրում էր 72530 հայ, որից քաղաքային էր 47075-ը, իսկ գյուղայինը՝ 25455-ը [Национальный состав населения РСФСР по данным Всесоюзной переписи населения 1989 года, 1990, 103-149]: Ըստ 1999թ. հաշվառման տվյալների՝ Ստավրոպոլի մարզի Բուդյանովսկ համայնքն ուներ մոտ 70 հազար բնակիչ, որոնցից պաշտոնապես հայ էին 7000-ը: Սակայն ոչ պաշտոնական տվյալներով՝ հայերի թիվը կարող է հասնել մինչև 20000-ի, որոնց մեջ մտնում են նաև Հայաստանից արտագաղթած, Ադրբեջանից բռնագաղթած մեր հայերնակիցները, կիսաձուլված և խառը ընտանիքները: Խորհրդային տարիներին ընթացել է քաղաքի հայության ինտենսիվ ռուսացման գործընթաց՝ կառուցվել են ռուսական դպրոցներ, երեք եկեղեցիներից երկուսը ոչնչացվել են, պատերազմից հետո ռուսական բնակչության հոսքն ակտիվացել է: Այնուամենայնիվ, չնայած այս ամենին՝ սերունդը դեռ հայախոս էր [Հակոբյան, 2012]: Ստավրոպոլ քաղաքում գործում էր Ստավրոպոլյան հայկական ազգային ինքնավարությունը և Ստավրոպոլի երկրամասի հայկական համայնքների խորհուրդը: Ստավրոպոլում հետխորհրդային տարիներին լույս էր տեսնում «Նաիրի» թերթը: Երկրամասի մյուս խոշոր հայկական համայնքը Գեորգիևսկում է, որտեղ, ըստ 1989 թ. մարդահամարի տվյալների, բնակվում էր 3162, իսկ 2003 թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ հայությունը կազմում էր շուրջ 5000: Այստեղ հիմնադրվել է մշակութային «Կանչ» ընկերությունը: Գեորգիևսկի շրջանի հայաբնակ գյուղերից են Նեզլոբնայան, Նովին, Կրասնոկոմունկը, Նիժնեգոլյակը, Նովոգավետնոյեն, Օբիլնոյեն, Նովոուլյանովսկը և այլն [Մինասյան, Մայիլյան, Մխոյան, 2018, 114-115]: Ստավրոպոլի մյուս հայաշատ բնակավայրը Կուրսկայա շրջանի Եդեսիա բնակավայրն է, որը Ռուսաստանի հարավի ամենահին հայկական բնակավայրերից է [История Села Эдиссия]: 1993 թ. հայերը կազմել են երկրամասի բնակչության մոտ 3%-ը՝ զբաղեցնելով երրորդ տեղը ռուսներից և կարաչայներից հետո: Դա պայմանավորված էր 1990-ական թթ. սկզբներին չեչենական պատերազմներով, որի արդյունքում տեղի հայությունը հիմնականում հեռացավ Ստավրոպոլի երկրամաս [Ալեքսանյան, 2016, 13]:

21-րդ դարի սկզբին սկսվում է աշխարհագրական զարգացումների նոր փուլ: Ստավրոպոլի մարզ հայ միգրանտների հոսքը զգալիորեն նվազում է: Իսկ բուն տարածաշրջանում նկատվում է հետխորհրդային առաջին ավիքի միգրանտների ինտենսիվ տեղաշարժ: Երբ նրանք հաստատվում են տարածաշրջանում, սկսում են ավելի հարմար վայրեր փնտրել ապրելու և աշխատելու համար: Առաջին հերթին հայերը հեռանում էին հյուսիսային և արևելյան շրջաններից՝ հիմնականում տեղափոխվելով Ստավրոպոլ և Պյատիգորսկ: 2002 թ. հայերը ներկա են եղել տարածաշրջանի 434

Ժողովրդագրական գործընթացները Հյուսիսային Կովկասի հայկական և ադրբեջանական համայնքներում 1991- 2022 թթ. (Ստավրոպոլի երկրամասի օրինակով)

բնակավայրերում, այսինքն զբաղեցրել են մարզային բնակավայրերի ցանցի 58%-ը, իսկ 2010 թ. 480 բնակավայրերում, այսինքն 64.4% [Ալեքսանյան, 2016, 157]: 2002 թ. Համառուսաստանյան մարդահամարի տվյալներով Ստավրոպոլի երկրամասի բնակչությունը կազմում էր 2 735 139 մարդ, որտեղ հայերի թիվը 149 249 էր, իսկ ադրբեջանցիներինը՝ 15 069 [Перепись населения РФ 2002 г., Ставропольский край Источник, Кавказский Узел]: Ստավրոպոլի երկրամասում հայերը թվով երկրորդ տեղն էին զբաղեցնում ռուսներից հետո:

Հայերի շրջանում գյուղաբնակների մասնաբաժինը ավելի բարձր է՝ 55-57%: Վերջին տարիներին նկատվում է հայ միգրանտների հոսքի աճ դեպի գյուղ, այլ ոչ թե դեպի քաղաք, ինչը կապված է աշխատանք գտնելու դժվարության հետ: Ըստ Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության՝ 1991-1998թթ.-ին Հայաստանից արտագաղթի հիմնական պատճառներն են եղել սղամարդկանց շրջանում երկրում աշխատատեղերի բացակայությունը (46%) և կյանքի կարիքները բավարարելու համար բավարար եկամուտ ստանալու անկարողությունը (18%), կանանց վերամիավորումն ընտանիքներում (40%) (նրանք սովորաբար գնում են նոր վայրում բնակություն հաստատած իրենց ամուսինների մոտ) և աշխատանքի բացակայությունը (24%) [Корякин 2007, с. 103]:

Ներկայումս տարածաշրջանում գրանցված են 10-ից ավելի ընկերություններ, որոնցից ամենամեծն են՝ «Նաիրին» Ստավրոպոլում, Պյատիգորսկի ազգային-մշակութային ինքնավարությունը, «Կռունկը» Կիսլովոդսկում, «Արարատը» Էսսենտուկիում, «Կանչը» Սբ. Գեորգիևսկում, «Սուրբ Խաչը» Բուդեննովսկում, «Եսեդաին» Եդեսիայում «Անին» գ. Սուվորովսկայայում: Ամենամեծ կազմակերպությունը գտնվում է Պյատիգորսկում, որտեղ բավականին ակտիվ են հայ էթնիկ ինքնակառավարման կազմակերպությունները, որոնք մասնակցում են իրենց քաղաքների, գյուղերի հասարակական կյանքին [Акопян, 2008, 6]: 1990-ական թթ. - 2013 թ. տասնյակ հայկական նորակառույց եկեղեցիներ իրենց հոգևոր-լուսավորչական գործունեությունն են վարել Նովոռոսիյսկում, Կրասնոդարում, Ադլերում, Տենգինկայում, Պյատիգորսկում, Սոչիում, Ստավրոպոլում, Կուրգանինսկում, Կիսլովոդսկում և այլուր [Մինասյան, Մայիլյան, Մխոյան, 2018, 135]: 2003 թ. Էսսենտուկիում բնակվում էր 7000-ից ավելի հայ: Գործում էին «Բարեկամություն» և մարզական «Արարատ» ընկերությունները, կառուցվել է հայկական մատուռ: Հիմնվել է նաև կիրակնօրյա հայկական դպրոց: Կիսլովոդսկում հայերը բնակություն են հաստատել 19-րդ դարավերջից: 1980-1990-ական թթ. այստեղ են տեղափոխվել նաև Ադրբեջանից գաղթած հայեր: Գործում է հայկական մշակութային-բարեգործական «Կռունկ» ընկերությունը: Ստավրոպոլի երկրամասի մեկ այլ բնակավայր Միներալնիե Վոդիում հայերը բնակվել են 20-րդ դարասկզբից: Հայրենական պատերազմից հետո այստեղ հայեր են եկել Վրաստանի շրջաններից և ՀՀ Շիրակի մարզի գյուղերից: 2000-ական թթ. տեղի հայությունը կազմում էր շուրջ 2500: Գործում էին «Հայք» ընկերությունը և կիրակնօրյա հայկական դպրոցը: Ստավրոպոլի երկրամասի ամենակազմակերպված համայնքներից է Պյատիգորսկի հայությունը, որը հարուստ մշակութային կյանք ունի: 1992 թվականից

Պյատիգորսկում գործում է Սուրբ Սարգիս հայկական եկեղեցին: 2000-ական թթ. տեղի հայության թվաքանակը հասավ 35-40 հազարի [Մինասյան, Մայիլյան, Մխոյան, 2018, 116-117]:

Ստավրոպոլի հայկական սփյուռքի առջև ծառայած խնդիրներից է նաև ազգային մամուլի խնդիրը: Պետական կառույցների կողմից կայուն ֆինանսավորում և աջակցություն չկա, տպագիր լրատվամիջոցների մեծ մասը տպագրվում է անկանոն, հրատարակությունների բաշխման ուղիները հաստատված չեն [Акопян, 2008, 6]: Հայկական համայնքը Ստավրոպոլում, ինչպես և ողջ Ռուսաստանում ունի լեզվապահպանության խնդիր: Ստավրոպոլի երկրամասում հայությունը աստիճանաբար դադարում է հիմնական լեզու համարել հայերենը՝ անցնելով ռուսերենի, ինչը մեծ վտանգ է հայապահպանության համար:

Արդեն 2010թ. մարդահամարի տվյալներով Ստավրոպոլի 2786281 ընդհանուր բնակչությունից պաշտոնապես հայ էին 161324-ը, որոնցից 82636 տղամարդիկ էին, իսկ 78688-ը՝ կանայք: Նույն ժամանակ երկրամասում ադրբեջանցիների թիվը կազմել է 17800, որոնցից 10511 տղամարդ, իսկ 7289-ը՝ կին [Всероссийская перепись населения 2010 года]: Տեղի է ունենում հայկական սփյուռքի համալրում առաջին հերթին Պրեդգորնիի, Գեորգիևսկու և Շպակովսկու շրջաններում: Ստավրոպոլի հայության տեղաբաշխվածությանը ծանոթանալու համար տե՛ս աղյուսակ 1: Ստավրոպոլի երկրամասի բնակչության բնական աճն ապահովում են հիմնականում հայերը, գնչուները և հյուսիսկովկասյան ազգությունները [О национальном составе населения и миграционных процессах в Ставропольском крае]:

Ազգային համախմբման առումով լուրջ դեր է վերապահված հայկական եկեղեցուն, որի դերակատարությունն աճում է, ինչը կարևոր է՝ կապված շրջակա բնակավայրում Ադրբեջանից տեղահանված ուղիների առկայության հետ [Հակոբյան, 2012]: 2021 թ. մարդահամարի տվյալներով Ստավրոպոլում հաշվվել է 135384 հայ, որոնցից 79338-ը բնակվում է քաղաքում, իսկ 56046-ը՝ գյուղում: Նույն հաշվառման ժամանակ ադրբեջանցիների թիվը կազմել է 13996, որից 7843-ը՝ քաղաքում, 6153-ը՝ գյուղում [Ставропольский край]: Աղյուսակ 2-րդում կարող եք ծանոթանալ Ստավրոպոլի երկրամասի հայերի և ադրբեջանցիների ժողովրդագրական դինամիկային 1989-2021 թթ.:

Ադրբեջանցիները առաջին անգամ Ստավրոպոլի երկրամասում հաստատվել են դեռ 1920-ական թվականներին՝ այս վայրերում խորհրդային իշխանության հաստատումից անմիջապես հետո [Иванова, 2016, 16]: 1989 թ. մարդահամարի տվյալներով՝ Ստավրոպոլում պաշտոնապես գրանցված էր 9450 ադրբեջանցի [Всесоюзная перепись населения 1989 года. Национальный состав населения по регионам России], իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ ավելի քան 11000: 1988-1993 թթ. Ադրբեջանի տարածքում հակամարտության և տնտեսության անկման պատճառով շատ ադրբեջանցիներ տեղափոխվել են Ստավրոպոլի երկրամաս:

Ադրբեջանական սփյուռքի առաջին կազմակերպությունները ի հայտ են եկել 1988-1989 թթ.: 1988 թվականին ստեղծվել է «Ազերի» (Ադրբեջան) կազմակերպությունը, որը միավորում է Արմավիր քաղաքի հարակից 9 շրջանների ադրբեջանցիներին [Алиева, 2016, 4]: 2002 թվականի մարդահամարի տվյալներով Ստավրոպոլի երկրամասում 15069 ադրբեջանցի կար [Ставропольский край]: Երկրամասում, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի մյուս շրջաններում, կան հստակ տարբերություններ՝ ադրբեջանցիների էթնիկ խմբերի միջև: Ստավրոպոլի երկրամասի ադրբեջանցիները երկար ժամանակ մշտապես բնակվել են այս տարածաշրջանում:

Ժողովրդագրական գործընթացները Հյուսիսային Կովկասի հայկական և ադրբեջանական համայնքներում 1991- 2022 թթ. (Ստավրոպոլի երկրամասի օրինակով)

Հատկապես հայտնի են Պյատիգորսկ քաղաքի ադրբեջանցիները, ովքեր աշխատում են տեղական մեծածախ շուկաների ցանցում: Պյատիգորսկը Ստավրոպոլի երկրամասի ամենամեծ առևտրի կենտրոնն է [Алиева, 2011, 140]:

2000 թ.-ից տարածաշրջանում գործում է Ստավրոպոլի ադրբեջանական հասարակական հիմնադրամը «Ադրբեջանական համայնք Ստավրոպոլի երկրամասում» [Иванова Н., 2016, 16]: Երկրամասի ադրբեջանցիները միավորվել են «Օդլար Յուրդու» կամ «Կրակի երկիր» կոչվող կազմակերպության մեջ՝ Ֆախրադդին Յարիևի գլխավորությամբ [Алиева, 2011, 141]: Ամեն տարի կազմակերպվում են հիշատակի երեկոներ՝ նվիրված Հեյդար Ալիևի հիշատակին, Նովրուզ Բայրամի տոնը, մայիսի 28-ը՝ Ադրբեջանի Հանրապետության անկախության օրը:

Ադրբեջանական կազմակերպության հիմնական խնդիրն է քարոզել ադրբեջանական պատմությունն ու մշակույթը, աջակցել փոքր և միջին բիզնեսներին, կապեր հաստատել հայրենիքի հետ և Ռուսաստանի ու Ադրբեջանի գործարար շրջանակների հետ: Ստավրոպոլի երկրամասի պատվիրակության և Ադրբեջանի կառավարության միջև ձեռք են բերվել պայմանավորվածություններ Ստավրոպոլի մարզից Ադրբեջան հացահատիկի և բժշկական սարքավորումների, իսկ Ադրբեջանից Ստավրոպոլի մարզ սննդամթերքի, ընկույզի, համեմունքների և այլն մատակարարելու վերաբերյալ:

2010 թ. մարդահամարի տվյալներով երկրամասի ադրբեջանցիների թիվը կազմում էր 17800 մարդ, որից 10511-ը տղամարդ, իսկ 7289-ը՝ կին: Համեմատության համար պետք է նշել, որ ադրբեջանցիները առավելապես քաղաքաբնակ են 11543, իսկ գյուղաբնակ՝ 6257 [Всероссийская перепись населения 2010 г., Население по национальности, полу и субъектам Российской Федерации]: Նրանք հիմնականում բնակվում են Ստավրոպոլում, Միներալնիե Վոդի առողջարանային քաղաքներում, Պյատիգորսկում, իսկ որոշ ադրբեջանցիներ՝ Նովոսելիցկի շրջանի գյուղերում:

Արդեն 2021 թ. մարդահամարի տվյալներով՝ տեղի ադրբեջանցիների թիվը կազմել է 13996՝ զիջելով նախորդ մարդահամարի տվյալներին: Քաղաքային բնակչությունը կազմել է 7843, իսկ գյուղականը՝ 6153 [Всероссийская перепись населения 2021 г., Национальный состав населения по регионам России]: Ստավրոպոլի երկրամասի ադրբեջանցիների քաղաքային և գյուղական բնակչությանը կարող էք ծանոթանալ աղյուսակ 3-րդում:

Այսպիսով, ուսումնասիրելով ժողովրդագրական գործընթացները Հյուսիսային Կովկասի Ստավրոպոլի երկրամասի հայկական և ադրբեջանական համայնքներում 1991-2022 թթ. թեման՝ հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, ինչպես նաև այլ բախումներ, տարածաշրջանային իրադարձություններ Հայաստանի և Ադրբեջանի միջև, հանգեցրել են բնակչության տեղահանումների և միգրացիոն հոսքերի՝ ազդելով տարածաշրջանի ժողովրդագրական կազմի վրա: Սակայն տեղահանումներով խնդիրը չի ստացել իր վերջնական լուծումը, քանի որ Հյուսիսային Կովկասում հայերի և ադրբեջանցիների հարաբերությունների վրա շարունակել են

ազդել պատմական լարվածությունն ու հակամարտությունները, ինչպես նաև ժամանակակից քաղաքական զարգացումները:

Պատմականորեն և՛ հայերը, և՛ աղբրեջանցիները բնակվել են Հյուսիսային Կովկաս տարածաշրջանում, թեև տարբեր տարածքներում, սակայն նրանց փոխազդեցությունները հաճախ աչքի են ընկել լարվածությամբ, հատկապես Հայաստանի և Աղբրեջանի միջև առկա հակամարտության համատեքստում:

Հյուսիսային Կովկասում էթնիկ շրջանների և սփյուռքի համայնքների առկայությունը նույնպես ազդել է միգրացիայի ձևերի վրա: Այս համայնքները հաճախ ծառայում էին որպես օժանդակ համակարգեր նորեկների համար՝ հեշտացնելով ինտեգրումը և բնակեցումը:

Աշխարհաքաղաքական գործոնները, ներառյալ Հայաստանի և Աղբրեջանի միջև լարվածությունը, ինչպես նաև հարևան պետությունների ազդեցությունը, ինչպիսիք են Ռուսաստանը և Թուրքիան, նույնպես ազդել են միգրացիոն գործընթացների վրա:

Սոցիալ-տնտեսական գործոնները, ինչպիսիք են ռեսուրսների և հնարավորությունների մրցակցությունը, հաճախ ազդել են և ազդում են Հյուսիսային Կովկասում հայերի և աղբրեջանցիների հարաբերությունների վրա: Տնտեսական անհավասարությունները և աշխատատեղերի կամ հողի համար մրցակցությունը կարող են սրել լարվածությունը համայնքների միջև:

Հյուսիսային Կովկասի հայերի, աղբրեջանցիների և այլ էթնիկ խմբերի միջև մշակութային և լեզվական կապերը երբեմն ազդել են միգրացիայի ձևերի վրա:


Չնայած շատ համայնքներում խաղաղ գոյակցությունը, հնարավոր է, որ լարվածությունը և հակամարտությունները, որոնք կենտրոնացած են պատմական դժգոհությունների և ժամանակակից խնդիրների վրա, կարող են նաև մարտահրավերներ ստեղծել այս համայնքների միջև ներդաշնակ հարաբերությունների համար:

Ստավրոպոլի երկրամասի հայությունը

N	Բնակավայր	Մարզ	Բնակավայրի տեսակը	2002 թ.	2010 թ.
1.	Պյատիգորսկ		Քաղաք	27217	18851
2.	Ստավրոպոլ		Քաղաք	14899	17540
3.	Կիսլովոդսկ		Քաղաք	14754	11713
4.	Գեորգիևսկ		Քաղաք	7487	8305
5.	Գորյաչեվոսկ		Գյուղ	6105	6679
6.	Միներալնիե Վոդի		Քաղաք	5697	6669
7.	Եղեսիա	Կուսկի	Գյուղ	5339	5376
8.	Միխայլովսկ	Շպակովսկի	Քաղաք	0	4461
9.	Բուդյանովսկ	Բուդյանովսկի	Քաղաք	1806	4585
10.	Նեկոբնայա	Գեորգիևսկի	Գյուղ	3435	4343
11.	Եսսենտուկի	Եսսենտուկի	Քաղաք	4381	3624
12.	Լիսոգորնայա	Գեորգիևսկի	Գյուղ	2637	3372


Ժողովրդագրական գործընթացները Հյուսիսային Կովկասի հայկական և ադրբեջանական համայնքներում 1991- 2022 թթ. (Ստավրոպոլի երկրամասի օրինակով)

Ստավրոպոլի երկրամասի հայերն ու ադրբեջանցիները՝ ըստ մարդահամարի տվյալների



Աղյուսակ 2

Ստավրոպոլի երկրամասի ադրբեջանցիների քաղաքային և գյուղական բնակչությունը 2010 և 2021 թթ.



Աղյուսակ 3

Գրականության ցանկ

Ալեքսանյան, 2016, Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941-1991, Երևան, 2016:

Բացվել է «Հայերը Ստավրոպոլում» ցուցահանդեսը, “Artsakh Press”, <https://artsakhpress.am/arm/news/9795/>, (մուտք՝ 01.01.2024).

Հակոբյան Ա., 2012, Հյուսիսային Կովկասում հայության ներկայիս դրության շուրջ, Երևան, 2012, «21-րդ դար», № 2(12):

Մինասյան, Մայիլյան, Մխոյան, 2018, Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները 20-րդ դարում. փաստություն և մարտահրավերներ, 2018, Երևան:

Акопян, 2008, Проблемы армян Ставропольского края // Вестник армянской истории. Пятигорск, 2008.

Алиева, 2016, Азербайджанцы на Кубани и Северном Кавказе, 2016. [108.pdf \(esrae.ru\)](#).

Алиева, 2011, Наш дом – Кавказ, Азербайджанцы на Северном Кавказе, Армавир.

Всесоюзная перепись населения 1989 года. Национальный состав населения по регионам России, Демоскоп Weekly - Приложение. Справочник статистических показателей. ([demoscope.ru](#)), (մուտք՝ 15.03.2024).

Всероссийская перепись населения 2010 г. Население по национальности, полу и субъектам Российской Федерации, Демоскоп Weekly - Приложение. Справочник статистических показателей. ([demoscope.ru](#)), (մուտք՝ 15.03.2024).

Всероссийская перепись населения 2010 года, Демоскоп Weekly - Приложение. Справочник статистических показателей. ([demoscope.ru](#)), (մուտք՝ 15.03.2024).

Всероссийская перепись населения 2021 года. Национальный состав населения по регионам России, Управление Федеральной службы государственной статистики по Северо-Кавказскому федеральному округу — О Северо-Кавказстате ([rosstat.gov.ru](#)), (մուտք՝ 15.03.2024).

Иванова, 2016, Народы Ставрополя: их прошлое и настоящее, Ставрополь, 2016.

История Села Эдиссия, <https://edissiya.ru/istoriya-sela.html>, (մուտք՝ 01.01.2024).

Корякин, 2007, Социальные и культурные аспекты адаптации мигрантов-армян в Краснодарском крае: 1988-2006 гг., Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Москва, 2007.

Ставропольский край, <https://26.rosstat.gov.ru/folder/83670>, (մուտք՝ 02.04.2024).

Суцкий С., 2015, Армяне Юга России и Крыма, Ростов-на-Дону, 2015.

О национальном составе населения и миграционных процессах в Ставропольском крае, <https://www.dumask.ru/analiticheskie-materialy/analiticheskie-zapiski/item/11991-%D0%BE-%D0%BD%D0%B0.html>, (մուտք՝ 02.04.2024).

Национальный состав населения РСФСР по данным Всесоюзной переписи населения 1989 года, Москва, 1990, с. 103-149.

Перепись населения РФ 2002 г., Ставропольский край Источник, Кавказский Узел, <https://www.kavkaz-uzel.eu/articles/176267>.

Chikhichin V., The ethnic map of Stavropol krai: Space-time dynamics for the last half-century, https://ideas.repec.org/a/spr/rorus/v6y2016i4d10.1134_s2079970516040067.html, 2016, (մուտք՝ 04.01.2024).